



ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵԾՈՒՅԳ

ԻՆՔՆԱԴԱՅՈՎՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

Մեր մեջ կան շատ կարիքավորներ: Շատ անդամներ ինքնապահովող են և հնարավորություն չունեն «հոգալու իրենց և իրենց ընտանիքի հոգևոր և նյութական կարիքները»:¹ Մարդկանց ինքնապահովման բերելը փրկության աշխատանքը է: Նախագահ Թոմաս Ս Մոնսոնն ուսուցանել է. «[Ինքնապահովումը] մեր հոգևոր և նյութական բարօրության հիմնական տարրն է: ... Եկեք լինենք ինքնապահով և անկախ: Փրկությունը կարող է ձեռք բերվել միայն այդ սկզբունքով»:²

Ինքնապահով դառնալու համար օգնության կարիք ունեցող մարդիկ կարող են լինել ծովի նվիրատվությունից օգտվողները, վերադարձող միսիոներները, նորադարձները, քիչ ակտիվ անդամները և տեղի քահանայության այն ղեկավարները, ովքեր աշխատանքը բարելավելու կարիք ունեն: Իր Եկեղեցու միջոցով Տերը գորեղ նոր գործիքներ, ռեսուրսներ և գործարկություններ է տրամադրում, որոնք նկարագրվում են այս ուղեցույցում օգնելու անդամներին ինքնապահովման իրենց ուղու վրա:³

Լինելով քահանայության ղեկավար դուք նրանց շարքում եք, ում Տերն ասել է. «. . . Բանալիները ես ձեզ տվել եմ . . . ծառայության գործի և իմ սրբերի կատարելության համար» (Վևու 124:143) և «ու՜մ տրված են այս բանալիները, դժվար չէ գիտելիք ձեռք բերել այն փաստերի մասին, որոնք վերաբերում են մարդկանց զավակների փրկությանը» (Վևու 128:11): Կարդացեք «Ավտոբուսի վարորդի առակը» աջում: Խնդրում ենք խորհեք ձեր դերի մասին այս կարևոր նախաձեռնությունը առաջ տանելու գործում:

Ղեկավարի այս ուղեցույցը մշակվել է օգնելու ձեզ գործածել ձեր բանալիները, օգտագործել այս նոր գործիքները և օգնել անդամներին, որ օգնեն իրենք իրենց հասնելու ինքնապահովման: Այդ գործում Մուրբ Հոգին կառաջնորդի ձեզ և Տերն այնպես կանի, որ դուք գործիք կդառնաք, բարձրացնելու աղքատներին ու կարիքավորներին և արագացնելու փրկության Նրա աշխատանքը:

1. *Չեռնսթրի Բ. Սպասափորել Եկեղեցում* (2010), 6.1.1:
2. Thomas S. Monson (quoting Marion G. Romney), "Guiding Principles of Personal and Family Welfare," *Ensign*, Sept. 1986, 3.
3. Լրացուցիչ տեղեկության համար տես srs.lds.org:

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սուրժ Լեյք Սիթի, Յուտա

© 2014, 2015 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:

Անգլերենի հաստատումը. 6/15
Թարգմանության հաստատումը. 6/15
Leader Guide-ի թարգմանությունը
Armenian
12373 201

Ավտոբուսի վարորդի առակը

«Ինքնապահովման նախաձեռնությունը նման է ավտոբուսի, որը պետք է ունենա լիցենզավորված վարորդ:

Ավտոբուսը կառուցվում է ինքնապահովման ծառայություն իրականացնող աշխատակիցների կողմից: Այն տրվում է ինքնապահովման ռեսուրս-կենտրոնի կողմից և ցցի ինքնապահովման հանձնախումբը իրականացնում է սպասարկումը: Ցցի ինքնապահովման մասնագետները և խմբերի վարորդները օգնում են անդամներին նստել ավտոբուս (բայց նրանք ինքնուրույն պետք է բարձրանան ավտոբուս): Ցցի նախագահը և եպիսկոպոսները ավտոբուսի վարորդներն են:

«Բոլորը պետք է անեն իրենց մասը, որպեսզի օգնեն անդամներին հասնել ինքնապահովման, սակայն, եթե ցցի նախագահը և եպիսկոպոսները չօգտագործեն իրենց բանալիները շարժիչը միացնելու և ավտոբուսը վարելու համար, ոչ ոք տեղ չի հասնի»:

ՌՈՆԱԼԴ ԱԲԱՆ,
Ինքնապահովման
ծառայությունների
տնօրեն Տակոբանում,
Ֆիլիպիններ:

ՔԱՅԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Ցցի նախագահություն (կամ Շրջանի Նախագահություն)

1. Մովորեք և ծխերի անդամներին ուսուցանեք ինքնապահովման վարդապետությունները և սկզբունքները (տես վերջին կազմերեսին): Եպիսկոպոսներին ու ցցի ինքնապահովման հանձնախմբի անդամներին հրահանգավորեք ինքնապահովման իրենց պարտականությունների վերաբերյալ:
2. Որոշեք ցցի ինքնապահովման նպատակները:
3. Կազմավորեք ցցի ինքնապահովման հանձնախումբ, որը կարող է մշակել, իրականացնել և վերահսկել ցցի ինքնապահովման գործողության ծրագիրը:
4. Առաջին հերթին հրավիրեք վերադարձող միսիոներներին և նորադարձներին (ըստ անհրաժեշտության) մասնակցելու ինքնապահովմանն ուղղված միջոցառումներին:
5. Ինքնապահովման հարցերն ընդգրկեք ցցի խորհրդի օրակարգում:
6. Կանչեք ցցի ինքնապահովման մասնագետ:
7. Անհրաժեշտության դեպքում կանչեք Եկեղեցու ծառայության միսիոներներին:
8. Ստուգեք և աշխատեք ցցի ինքնապահովման առաջընթացի և ՄԿԿ վարկային հաշվետվությունների վրա:
9. Ընտանեկան պատմության կենտրոնին ցուցումներ տվեք, որպեսզի նրանք, անհրաժեշտության դեպքում, կիսվեն ինքնապահովման նպատակներով:

Ցցի ինքնապահովման հանձնախումբ

Ցցի ինքնապահովման հանձնախումբը բաղկացած է հետևյալ մարդկանցից՝ ցցի նախագահության անդամից (նախագահող), ինքնապահովման համար պատասխանատու բարձրագույն խորհրդականից, ցցի Միավոր Միության նախագահության անդամից, եպիսկոպոսների բարօրության խորհրդի նախագահից և ցցի ինքնապահովման մասնագետից: Լրացուցիչ մասնակիցներ կարող են լինել՝ ցցի Երիտասարդ տղամարդկանց և Երիտասարդ կանանց նախագահությունների անդամները, ցցի լրացուցիչ մասնագետները, լիաժամկետ ծառայության մեջ գտնվող ավագ միսիոներները և Եկեղեցու ծառայություն իրականացնող միսիոներները:

1. Դիտեք «Մշխատել ինքնապահովման ուղղությամբ» տեսանյութը (մատչելի է srs.lds.org/videos կայքում):
2. Մշակեք, գործի դրեք և վերահսկեք ցցի ինքնապահովման գործողության ծրագիրը:
3. Հաճախակի անցկացրեք հավաքներ *Իմ ողին դեպի ինքնապահովումը* թեմայով (տես 4-րդ էջ):
4. Կազմավորեք և ծառայողներով ապահովեք ցցի ինքնապահովման ռեսուրս-կենտրոնը: Նշանակեք Եկեղեցական ծառայության միսիոներական մի զույգի կամ ինքնապահովման մի մասնագետի, որպեսզի առաջնորդի կենտրոնի գործունեությունը (տես էջ 2):
5. Ծխերի խորհուրդներին ուսուցանեք ինքնապահովման իրենց պարտականությունները:
6. Օգտագործեք ինքնապահովման ծառայություն իրականացնող աշխատակիցների կողմից մշակված ծառայությունները և ռեսուրսները:
7. Հրավիրեք վերադարձող միսիոներներին և նորադարձներին (ըստ անհրաժեշտության) մասնակցելու *Իմ ողին* հավաքներին և ինքնապահովման խմբերին:



«Ինքնապահովումը մեր աշխատանքի արդյունքն է և մյուս բոլոր բարեգործական ձեռնարկումների հիմքը: . . . Եկեք աշխատենք մեր կարիքների համար: Եկեք լինենք ինքնապահովող և անկախ: Փրկությունը կարող է ձեռք բերվել միայն այդ սկզբունքով»:

THOMAS S. MONSON
(quoting Marion G. Romney), "Guiding Principles of Personal and Family Welfare," *Ensign*, Sept. 1986, 3

Ցցի ինքնապահովման մասնագետ

Մասնագետը կապակցող օղակ է Ինքնապահովման ծառայությունների բոլոր գործառնությունների միջև (ցցի ինքնապահովման հանձնախմբի, ցցի ինքնապահովման ռեսուրս-կենտրոնի և ինքնապահովման ծառայությունների կառավարչի միջև):

1. Պատրաստեք ցցի ինքնապահովման հանձնախմբի օրակարգը:
2. Ուսուցանեք Եկեղեցու ծառայության միսիոներներին և կամավորներին աշխատացնել ինքնապահովման ռեսուրս-կենտրոնը:
3. Ուսուցանեք և վերահսկեք ցցում ինքնապահովման այլ մասնագետների:
4. Ըստ անհրաժեշտության՝ պատվիրեք ինքնապահովման նյութեր:
5. Անհրաժեշտության դեպքում ուսուցանեք և աջակցեք Եպիսկոպոսներին և ծխերի խորհուրդներին:
6. Օգնեք անդամներին գրանցվել srs.lds.org/register կայքում:
7. Կազմավորեք, վերահսկեք, աջակցեք և օժանդակեք ինքնապահովման խմբերին: (Անհրաժեշտության դեպքում այլ անդամներ կարող են կանչվել որպես խմբերի վարողներ:)
8. Ուսումնասիրեք և հետևեք առցանց հասանելի srs.lds.org/facilitator-ի սկզբունքներին:

Եպիսկոպոսություն (կամ Ճյուղի նախագահություն)

1. Ծխերի անդամներին ուսուցանեք ինքնապահովման վարդապետությունները և սկզբունքները (տես վերջին կազմերեսին):
2. Ծխի խորհրդի միջոցով ուղղորդեք ինքնապահովման ջանքերը.
 - Գտեք, հաշվառեք և հրավիրեք բոլոր կարիքավոր անդամներին դառնալ ինքնապահովող: Չափահաս անդամի ինքնապահովման գործիքը leader.lds.org/self-reliance կայքում կարող է օգտակար լինել այս գործընթացում:.
 - Քվորումի և օժանդակ կազմակերպությունների ղեկավարների միջոցով կարիքի մեջ գտնվող մարդկանց աջակցություն, ուսուցիչներ և օգնություն ցուցաբերեք:
3. Կարիքի մեջ գտնվող մարդկանց հորդորեք լրացնել *Իմ ուղին դեպի ինքնապահովումը* գրքույկը և միանալ ինքնապահովման որևէ խմբի:
4. Անհրաժեշտության դեպքում կանչեք ծխի ինքնապահովման մասնագետներ՝ որպես խմբերի վարողներ:
5. Անցկացրեք ՄԿԷ վարկի համար անհրաժեշտ երաշխավորագրի հարցազրույցները (տես srs.lds.org/loans):
6. Ստուգեք և աշխատեք ծխի ինքնապահովման առաջընթացի և ՄԿԷ վարկային հաշվետվությունների վրա: Եպիսկոպոսները չպետք է հավաքեն ՄԿԷ վարկերի մարումները:
7. Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ աջակցություն ստացեք ցցի ինքնապահովման հանձնախմբից:

ՆՅՈՒԹԵՐ

Ինքնապահովման ռեսուրս-կենտրոններ

Ցցերին խրախուսվում է ինքնապահովման ռեսուրս-կենտրոն հիմնել Եկեղեցու շինություններում, հաճախ կիսելով վայրը ընտանեկան պատմության կենտրոնի հետ: Ինքնապահովման ռեսուրս-կենտրոններում ծառայում են միսիոներներ և կամավորներ և կենտրոնը ինտերնետային հասանելիություն, խորհրդատվություն և այլ օգտակար միջոցներ է տրամադրում աշխատանք փնտրողներին, ինքնազբաղված մարդկանց և ապագա ուսանողներին:



«Այս ժողովրդի կարիքները հոգալու համար որևէ նոր կազմակերպության կարիք չկա: Միակ անհրաժեշտ բանը Աստծո քահանայությանը գործի դնելն է»:

ՀԱՐՈՂ Բ. ԼԻ,
"Admonitions for the Priesthood of God,"
Ensign, Jan. 1973, 104



«Ընտանիքում, ծխում կամ ցցում չկա մի խնդիր, որը չի կարելի լուծել, եթե մենք լուծումներին նայում ենք Տիրոջ ձևով՝ խորհուրդ անելով, – իսկապես խորհրդակցելով, – իրար հետ»:

Մ. ՌԱՍՍԵՆ ԲԱՍԱՐԴ,
Counseling with Our Councils, rev. ed. (2012), 4

Ինքնապահովման խմբեր

Ինքնապահովման խմբի ժողովի ժամանակ կիրառվում է խորհրդի օրինակը և այն տարբերվում է Եկեղեցու դասարանների, դասերի և սեմինարների մեծ մասից: Այնտեղ չկան ուսուցիչներ կամ հրահանգիչներ: Փոխարենը՝ խմբի անդամները խորհրդակցում են իրար հետ, սովորում են միասին, ուսուցանում միմյանց, հանձն առնում գործել ըստ իրենց իմացածի և պահում միմյանց ստանձնած պարտավորությունները: Խմբի այդ ուղղորդման և խորհրդակցման գործընթացը՝ աշխատանքային գրքերի և տեսանյութերի հետ միասին, ստեղծում է ուսումնական աշխույժ մթնոլորտ, որն ամրապնդում է անդամին ինքնապահովման կյանքին ուղված իր առաջընթացում:

Ցցերի և ծխերի ղեկավարներն ինքնապահովման խմբերի կազմավորման և ուղղորդման համար կանչում են ինքնապահովման մասնագետներին: Խմբերի վարողները ուսուցիչներ չեն. նրանք օգնում են խմբին հետևել ինքնապահովման ընթացքին, ինչպես սահմանված է ձեռնարկներում: Խմբի վարողներին պետք է, երբեմն, խմբերի ժողովների ժամանակ համացանցի մուտք և տեսանյութեր ցուցադրելու միջոցներ տրամադրել: Ղեկավարները կարող են կազմավորել այնքան խմբեր և կանչել այնքան մասնագետներ, որքան անհրաժեշտ է: Խմբի անդամներին երբեմն կլինդրեն վարել: Յուրաքանչյուր խումբն առնվազն 12 անգամ հավաքվում է միասին երկու ժամով և բաղկացած է 8–14 անդամներից: Խմբերը կարող են հավաքվել ցցի ինքնապահովման ռեսուրս-կենտրոնում, Եկեղեցու շինությունում կամ այլ պատշաճ վայրերում, որոնք հարմար են անդամների համար:

Տեղական ղեկավարները որոշում են, թե հետևյալ խմբերից որոնք են անհրաժեշտ իրենց միավորներում:

1. *Ինչպես սկսել և մեծացնել իմ գործը* խումբն օգնում է մարդկանց սկսել կամ բարելավել սեփական գործը: Այդ խմբերը փոխարինում են Ինքնագրադավաժության սեմինարներին:
2. *Աշխատանքի իմ ոլորտում* խումբն օգնում է մարդկանց գտնելու նոր կամ ավելի լավ աշխատանք: Այդ խմբերը փոխարինում են Կարիերայի սեմինարներին:
3. *Կրթություն հսկումն ավելի լավ աշխատանքի* խումբն օգնում է մարդկանց բացահայտել կրթական այնպիսի ուղի, որի միջոցով իրենց եկամուտը կբարձրանա: Այդ խմբերը փոխարինում են «Պլանավորում հանուն հաջողության» սեմինարներին:

Որպես յուրաքանչյուր խմբի բաղկացուցիչ մաս, անդամները նաև ուսումնասիրում են ինքնապահովմանը վերաբերող 12 վարդապետական թեմաներ՝ *Իմ հիմքը. սկզբունքներ, հստություններ և սովորություններ* գրքույկից:

Եկեղեցու զբաղվածության օգնության և նախընտրելի ռեսուրսների ցանկեր

Յուրաքանչյուր տարածքում Եկեղեցին հաստիքային աշխատողներ է վարձում ինքնապահովման գործին աջակցելու համար: Այդ աշխատակիցների թվում են ինքնապահովման տարածքային կառավարիչը (ԻՏԿ), ինքնապահովման գործերի կառավարիչը և ինքնապահովման ծառայությունների կառավարիչը: Այդ աշխատողներն օգնում են համակարգելու ցցերի ինքնապահովման ռեսուրս-կենտրոնների կարիքները և ցցերին տրամադրում են միջոցներ և ուսուցում: Այդ միջոցները կարող են ներառել դասավարդներին, նախընտրելի ծրագրերի և ուսումնական հաստատությունների ցուցակները, տեղական աշխատատեղերի հնարավորությունները և գործ սկսելու համար գումար տրամադրող ֆինանսական կազմակերպությունների անունները:

Ինքնապահովման վեբ կայք

Ղեկավարներն ու անդամները կարող են իմանալ ավելին, այցելելով՝ srs.lds.org:

Ինչպե՞ս ես կարող եմ չափել իմ ծխի կամ ցցի անդամների ինքնապահովման առաջընթացը:

Ձեր ծխի կամ ցցի անդամներին դեպի ինքնապահովում առաջանալ օգնելիս կանոնավոր կերպով չափեք այն անդամների թիվը, ովքեր.

1. Ըստ եպիսկոպոսի գնահատականի ինքնապահովող չեն:
2. Լրացրել են Իմ ուղին:
3. Լրացրել են Իմ հիմքը:
4. Բացել են իրենց գործը, լավ աշխատանք ունեն կամ ընդգրկված են կրթական ծրագրում:

Ղեկավարի և գործավարի ռեսուրսներ

Չափահաս անդամի ինքնապահովման գործիքը կարող է օգնել եպիսկոպոսներին, երբ նրանք գտնում են և կենտրոնանում այն անդամների վրա, ովքեր կյանքի կարիքները չեն կարողանում բավարարել: Այս ռեսուրսը կարելի է գտնել leader.lds.org/self-reliance կայքում:

Իմ ուղին դեպի ինքնապահովումը թեմայով հավաքներ

Ցցերը և ծխերը կանոնավոր կերպով անց են կացնում *Իմ ուղին դեպի ինքնապահովումը* թեմայով հավաքներ: Այդ հավաքներն անդամներին դնում են ինքնապահովման ուղու վրա՝ օգնելով նրանց հասկանալ ինքնապահովման վարդապետության կարևորությունը, զնահատում են նրանց ինքնապահովման ներկայիս մակարդակը, որոշում են այն հմտությունները և եկամուտը, որոնք անհրաժեշտ են նյութապես ինքնապահով դառնալու համար և ընտրում են ինքնապահովման այն խումբը, որը կօգնի նրանց հասնելու այդ նպատակին: *Իմ ուղին դեպի ինքնապահովումը* գրքույկն ուղղորդում է այդ գործընթացը: Գնահատումը կարող է նաև արվել անհատապես՝ քահանայության ղեկավարի հետ, ինքնապահովման մասնագետի հետ ինքնապահովման ռեսուրս-կենտրոնում կամ այլ վայրերում: Դիտեք «Ինչպես օգտագործել *Իմ Ուղին*»՝ srs.lds.org/videos կայքում:

Ուսուցողական տեսանյութեր

Առցանց դիտեք հետևյալ տեսանյութերը srs.lds.org/videos:

ԼՍԱՐԱՆ	ՏԵՍԱՆՅՈՒԹԻ ՎԵՐՆԱԳԻՐ	
Ղեկավարները	Ես կապահովեմ Իմ Սրբերին	
	Ցցի ինքնապահովման հանձնախումբը	
	Ցցի ինքնապահովման հանձնախմբի ժողովը	
	Ցցի ինքնապահովման մասնագետները	
	Օգնել ծխի խորհուրդներին	
	Ինչպես կազմավորել ինքնապահովման խմբեր	
	Աշխատել դեպի ինքնապահովում	
	<i>Իմ հիմքը</i> տեսանյութեր (12)	
	Վարողներ	Իմ նպատակը
		Ինչպես վարել խումբը
Ինչպես. Նախապատրաստել		
Ինչպես վարել. <i>Իմ հիմքը</i>		
Ինչպես վարել. Հաշվետվություն		
Ինչպես վարել. Սովորել		
Ինչպես վարել. Խորհել		
Ինչպես վարել. Պարտավորվել		
Ինչպես. ղեկավարել ժողովները		
«Գնա՛ և գործի՛ր» ուսուցում		

Դիտողությունները խրախուսվում է

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները SRSfeedback@ldschurch.org կամ srs.lds.org/feedback:

Խմբի Նյութեր

Նյութերը, տեսանյութերը և ուսուցումը հասանելի է Gospel Library (ավետարանի գրադարան) բջջային հավելվածում և առցանց՝ srs.lds.org կայքում: Նյութերը կարելի է նաև պատվիրել Եկեղեցու բաշխման կենտրոններից:



Իմ ուղին դեպի
ինքնապահովում

Իմ ուղին դեպի ինքնապահովումը

Քույր մասնակիցները սկսում են այս գրքույկով, որպեսզի որոշեն ինքնապահովման իրենց ներկայիս մակարդակը և որոշեն, թե որ խմբի օգնությամբ նրանք կդառնան ինքնապահով: Խմբերի ուղղվածությունն են ինքնազբաղվածությունը, աշխատանքի որոնումը և կրթությունը:



Իմ հիմքը, սկզբունքներ,
հմտություններ,
սովորություններ

Իմ հիմքը. Սկզբունքներ, հմտություններ, սովորություններ

Քույր երեք խմբերի անդամներն օգտվում են այս գրքույկից ամեն ժողովին, երբ քննարկում և կիրառում են ինքնապահովման հիմնական հոգևոր սկզբունքները:



Ինչպես սկսել
և մեծացնել իմ
գործը

Ինչպես սկսել և մեծացնել իմ գործը


Նրանց համար, ովքեր ունեն իրենց գործը կամ ցանկանում են սկսել: Խմբի անդամները սովորում են հաշվառում, շուկայավարություն և կանխիկի կառավարում: Նրանք նաև փորձարկում են իրենց եկամուտը մեծացնելու եղանակները փոքր գործարարական փորձարկումների միջոցով:



Աշխատանքի իմ
որոնումը

Աշխատանքի իմ որոնումը

Նրանց համար, ովքեր ունեն լավ աշխատանք գտնելու հմտություններ: Խմբի անդամները գտնում են աշխատանք, փնտրելով հնարավորություններ, սովորում են ծանոթների միջոցով աշխատանք փնտրելու, գորեղ կերպով իրենց ներկայացնել և պատրաստվել հարցազրույցներին: Այս խմբում մասնակցելու արդյունքը աշխատանք գտնելն է:



Կրթություն՝ ավելի լավ
աշխատանքի
համար

Կրթություն՝ ավելի լավ աշխատանքի համար

Նրանց համար, ովքեր ունեն կրթության կամ վերապատրաստման կարիք լավ աշխատանք գտնելու կամ իրենց գործը սկսելու համար: Խմբի անդամները առանձնացնում են այն աշխատանքը, որը կօգն իրենց դառնալ ինքնապահովող, ապա գտնում են ուսումնասկան հաստատությունը կամ ծրագիրը (ներառյալ՝ Ուղին), որը տանում է դեպի այդ աշխատանքը: Այս խմբում մասնակցելու արդյունքը ուսումնական ծրագիրն է և ՄԿՀ վարկը (եթե անհրաժեշտ է):

Խմբի այն անդամներին, ովքեր կատարում են *Իմ հիմքը* և *Ինչպես սկսել և մեծացնել իմ գործը* սեմինարների պահանջները, հնարավոր է ՎՕՍ Բիզնես Քոլեջի հավաստագրեր տրվեն:

ԻՆՔՆԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿՋԲՈՒՆՆԵՐԸ

Վարդապետություններ

1. Ֆիզիկականն ու հոգևորը մեկ են

Վարդապետություն և Ուխտեր 29.34, Ալմա 37.38-43

2. Տերը պատվիրում է մեզ լինել ինքնապահովող և Նա ունի ողջ գորությունը մեզ օգնելու համար:

Վարդապետություն և Ուխտեր 104.15-16; 100.1; 1 Նեփի 9.6; 2 Նեփի 27.21, 23; Մոսիա 4.9; Մատթեոս 28.18

3. Ինքնապահովումը վեհացման սկզբունք է:

Վարդապետություն և Ուխտեր 132.20

Սկզբունքներ

Հետևյալ սկզբունքների մասին ավելի շատ տեղեկություն ստանալու համար անդրադարձեք *Իմ հիմքը. Սկզբունքներ, հմտություններ, սովորություններ*:

1. Հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոսը

1 Նեփի 9.6; Եբրայեցիս 11

2. Հնազանդ լինել

Վարդապետություն և Ուխտեր 93.28; 130.20-21; Աբրահամ 3.25; Եբրայեցիս 5.8-9

3. Գործել

2 Նեփի 2.16, 26

4. Ծառայել և լինել միասնական

Մովսես 7.18; Գաղատացիս 5.14

ՀԻՍՈՒՄ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՆԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Ինքնապահովման
ծառայություններ
ԿՐԹԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN



4 02123 73201 9
12373 201